# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
# ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

02/05/2019

ՈՐՈՇՈՒՄ N 19-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ, 94-րդ կետերով հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով, կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Սանդի Ձոր 1-ին թաղամասի թիվ 38 հասցեում գտնվող / վկայական N18032019-09-0045/ բնակավայրերի այլ հողերից 200.0քմ հողատարածքը, անասնապահական ժամանակավոր շինություններ տեղադրելու նպատակով, 1 քմ տարեկան վարձավճար սահմանելով 200 դրամ, 10 /տասը/ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի 09-003-0207-0039 ծածկագրով / վկայական N19042019-09-0040/գյուղատնտեսական այլ հողատեսքից 0.09338հա հողատարածքը, գյուղմթերքների արտադրություն կազմակերպելու նպատակով, 1հա տարեկան վարձավճար սահմանել 150 000 դրամ, 10 /տասը/ տարի ժամկետով:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Վերիշեն գյուղի / վկայական N19042019-09-0032/ գյուղատնտեսական այլ հողատեսքից 0.35987 հա հողատարածքը, գյուղմթերքների արտադրություն կազմակերպելու նպատակով, 10 /տասը/ տարի ժամկետով:

4.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ գյուղի 09-045-0120-0201 ծածկագրով / վկայական N18042019-09-0062/ գյուղատնտեսական այլ

հողատեսքից 0.21հա հողատարածքը, գյուղմթերքների արտադրություն և ագրոտուրիզմ կազմակերպելու նպատակով, 1 հա տարեկան վարձավճար սահմանել 150 000 դրամ, 10 /տասը/ տարի ժամկետով:

5.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի /վկայական N29042019-09-0007/ գյուղատնտեսական այլ հողատեսքից 0.3000 հա հողատարածքը, գյուղմթերքների արտադրություն և ագրոտուրիզմ կազմակերպելու նպատակով, 1 հա տարեկան վարձավճար սահմանել 150000 դրամ, 10/տասը/ տարի ժամկետով:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԱՐԱՏ

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԷՐԻԿ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԳԱՐԻԿ

ԴՈՒԼՈՒՆՑ ԴԱՎԻԹ

ԼԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՄԱՔՈՒՆՑ ՍԱՄՎԵԼ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐՄԵՆ

ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2019թ. ____________ «3»
ք.Գորիս